

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

30.01.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյան, Ա.Օհանյանը, Հ.Մկրտչյանը, Ս. Հովհաննիսյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Հ ա ն ձ ն ա ր ա ղ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բաղդոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել և միջոցներ ձեռնարկել Դիլիջանում ՀՀ Նախագահի և համայնքների ղեկավարների հետ կայացած հանդիպման ժամանակ տրված հանձնարարականների կատարման ընթացքին:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բաղդոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին`

ա/ Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզի համայնքների կողմից ներկայացվող սոցիալական և տնտեսական զարգացման ծրագրերին, անհրաժեշտության դեպքում դրանք նախապես քննարկել շահագրգիռ մարմինների և պատասխանատուների հետ:

/Ժամկետ` մինչև մարտի 31/

բ/ Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների ճշտված բյուջեներին, համեմատական վերլուծություն կատարել մեկ շնչին ընկնող եկամուտների, ՀՆԱ-ի, աղքատիության և այլ ծախսերի, եկամտային ու ծախսային մասերի համաչափության, սոցիալական օգնության ծախսերի սահմանաչափերի սահմանման նկատմամբ:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ